ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնք,
ք. Եղվարդ, Երևանյան 1, Հեռ. (0224) 2-11-10, eghvard.city@gmail.com

N Ե-1120
24 մարտ 2025թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավանեսյան.

Հայտնում եմ Ձեզ, որ <<ՊՐՈ ՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ն /ՀՎՀՀ 04249827/ մասնակցել է Նաիրիի համայնքապետարանի կողմից կազմակերպված Նաիրի համայնքի կարիքների համար մետաղյա աղբարկղերի ձեռքբերման <<ԿՄՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/15>> ծածկագրով գնման ընթացակարգին:

<<ԿՄՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/15>> ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել <<ՊՐՈ ՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ն, որը խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ <<ՊՐՈ ՍՏՐՈՅ>> ՍՊԸ-ն <<ԿՄՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/15>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում թույլ է տվել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված խախտում:

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պատվիրատուի ղեկավարը որոշում է կայացրել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Կից ներկայացվում է մասնակցի տվյալների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող աղյուսակը:

Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Կատ. ՝ Մ.Պապյան
Հեռ.՝098-11-88-00